

Ծուռ հայելիների թագավորությունում

Վերհիշելով «նորը լավ մոռացված հինն է» ասացվածքը՝ համաձայնենք, որ այս ճշմարտությունը ոչ միայն առայսօր չի հերքվել, այլ ընդհակառակն, բնագիտության, պատմագիտության, հնագիտության և այլ գիտությունների զարգացմանը զուգահեռ հավաստիության նոր փաստարկներ է ձեռք բերում: «Այո-մարդկանց» իշխանությունը որևէ երկրում ևս նորություն չէ, թեև «yes-man»* եզրը նոր ժամանակներում գործածության մեջ է մտել նախ ԱՄՆ-ում, իսկ հետո նաև այլ երկրներում:

Սկզբունքորեն, ԱՄՆ 36-րդ նախագահին անհրաժեշտ չեղավ «հեծանիվ հայտնագործել»՝ պատմության մեջ անմահանալու և «այո-մարդ» եզրի առաջացմանը նպաստելու համար: Պարզապես, Լինդոն Ջոնսոնը բոլոր ժամանակների հազարավոր այլ ղեկավարների նման սեփական որոշումների քննարկումներ, առավել ևս քննադատություններ չէր սիրում: Ուստի, երբ XX դարի մեծագույն ոճրագործություններից մեկի՝ նախագահ Ջոն Քեննեդու սպանությունից հետո նա դարձավ ԱՄՆ նախագահը, կարճ ժամանակամիջոցում ձեռքբազատվեց ինքնուրույն կարծիք ունեցող բոլոր ծառայողներից և իրեն շրջապատեց մարդկանցով, որոնք ոչ այնքան զբաղված էին երկրի կառավարման հարցերով, որքան նոր նախագահի քաղաքականության արդարացման համար անհրաժեշտ հիմնավորումներ որոնելով և գաղափարներ «թխելով»: Ահա այդ մարդիկ էին, որ ամերիկացիների կողմից որակվեցին իբրև «յեամեններ»: Թե ինչի հասցրեց Լինդոն Ջոնսոնի բնավորության այդ փոքրիկ թերությունը և «այո-մարդկանց» կույր ու մոլեռանդ ծառայությունը՝ հայտնի է բոլորին՝ երկրորդ աշխարհամարտից հետո թերևս ամենաանիմաստ և էությանը հանցագործ, հազարավոր մարդկանց կյանք խլած պատերազմը Վիետնամում և դրանից բխած բարոյահոգեբանական, քաղաքական և տնտեսական խոր ճգնաժամը բուն ԱՄՆ-ում: Այդ խելահեղ և տանուլ տված պատերազմն ու նրա ուղղությամբ տարվող «այո-մարդկանց» ցնորային քաղաքականությունն էր, որ անմահացրեց Ջոնսոնի անունը սերունդների համար:

ԱՄՆ նման հզոր պետությունն իր կենսունակ բնակչությամբ կարողացավ դիմակայել ջոնսոնյան էպոպեային, թեև նրա արձագանքները հասարակական և քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում զգացնել էին տալիս ընդհուպ մինչև վերջերս: Անցյալի գիրկն անցած այս պատմության մեջ մեր օրերի համար առավելապես կարևորվում է «յեամենությունը» իբրև երևույթ: ԱՄՆ պատմության մեջ իր նախադեպը չունեցող՝ հասարակական գիտակցության ձևավորման այս խեղաթյուրումն ու բացահայտ խաբեությունը բոլոր մակարդակներում ջոնսոնյան Ամերիկան նմանեցրեց «Ծուռ հայելիների թագավորությանը»: Լս մեկ կարևոր երանգ. վաթսուներկանների ԱՄՆ ապացուցեց, որ չսահմանափակված և փաստորեն ավտորիտար իշխանության կարելի է

հասնել նաև ամենաժողովրդավար համարվող երկրում, ինչը հերքում է այն ավանդական պատկերացումը, թե միակարծության վրա հիմնված կործանարար մենիշխանությունը լուրջ քայլեր առնելով, արյունոտ ու բռնապետությունների մենաշնորհն է:

Այլակարծության նկատմամբ պաթոլոգիական անհանդուրժողություն ցուցաբերող և սեփական որոշումներն ու գործողությունները կասկածի ենթարկելու անընդունակ ղեկավարներն իրականում առավել հեշտությամբ են ղեկավարվում կողմնակի ուժերի և առանձին բախտախնդիրների կողմից, որոնք բնագործ են կամ սերտված նպատակամղվածությամբ կարողանում են սեփական ծրագրերն ու գաղափարները ներկայացնել իբրև «հանճարեղ» ղեկավարի մոտ ինքնուրույնաբար ծնված մտքեր և օգտագործում են նրա իշխանությունը դրանց իրականացման համար: Հենց ամենաինքնահավան ղեկավարներն են, որ անբաժան են եղել իրենց «սովերից»՝ մեկ կամ մի քանի օգնական-խորհրդականներից, որոնք էլ իրականում ղեկավարել են երկիրը: Ջոնսոնի մոտ դա Ռուսաստանից արտագաղթած հրեական ընտանիքից սերող՝ ազգային անվտանգության գծով խորհրդական Ուոլտ Ռոսթոուն էր (Ռոստով), որին առանց չափազանցության կարելի է անվանել ԱՄՆ նախագահի «միտքը, պատիվը, խիղճը»: Պատմությունը դեռ իր գնահատականը կտա Ռոսթոունի խաղացած դերին, կգա ժամանակ նաև, որ մեզ հասու կլինի այն անմիջական կապը, որ կար 1964 թվին սանձազերծված լայնածավալ վիետնամական պատերազմի և 1967, 1973 թվականների արաբա-իսրայելյան պատերազմների և նրանցում ԱՄՆ գրաված դիրքի միջև: Բայց սա արդեն այլ խնդիր է, իսկ մեզ համար կարևորվում է այն իրողությունը, որ անգամ գերտերությունները, որոնք որոշում են աշխարհի ժողովուրդների բախտը, կառավարելի են՝ ի դեմս իրենց ղեկավարների:

Հարց է ծագում. իսկ մեզ ի՞նչ ԱՄՆ քաղաքական խոհանոցն ու նրա ոչ հեռավոր անցյալի պատմական դրվագները: Ինչպե՞ս կարելի է համեմատել անհամեմատելին՝ Հայաստանն ու ԱՄՆ: Մենք միտումնավոր ընտրեցինք այս համեմատությունը, քանզի ԱՄՆ կերպարն առավելագույնս տպավորված է ազատագրված Հայաստանի հասարակական գիտակցության մեջ, և նրա քաղաքական ազդեցությունը մեր հանրապետության և նրա իշխանությունների վրա խիստ զգալի է: Բացի այդ, կրկնվող, արդեն իսկ ավանդական երևույթները հիմնականում դրսևորվում են նույն ձևով, անկախ երկրից, նրա աշխարհագրական դիրքից կամ տվյալ փուլում ունեցած հզորության աստիճանից: Կույր համաձայնության ավանդույթները մենք ժառանգել ենք խորհրդային իշխանության ժամանակներից, և այսօր հասարակական-քաղաքական աշխույժ գործունեության մեջ ընդգրկված «չափահաս սերունդները» լիարժեք ժառանգորդներն են այն բարոյականության և ստերեոտիպների, որ խորհրդային իշխանության պայմաններում հասարակական հարաբերությունների հիմքն էին և էությունը: Արդյունավետ կարիերիզմի հիմնական սկզբունքներն ու օրենքները ևս դարերի ընթացքում նշանակալից փոփոխություններ չեն կրել. ճիշտ կռահել ղեկավարի մտքերը և ձգտել առաջինը

հավանություն տալ դրանց: «Հին է, ինչպես աշխարհը», կասեր սովորական քաղաքացին, բայց, այնուամենայնիվ, կան իրավիճակներ, երբ այս արմատացած երևույթը պետք է հաղթահարվի և գոնե առժամանակ իրր տեղը զիջի որակապես այլ մոտեցումներին ու արժեքներին: Այդպիսի իրավիճակներ պետք է համարել տվյալ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող անցումային փուլերը՝ կազմավորումների (ֆորմացիա) փոփոխությունները, պատերազմները, այսինքն՝ այն իրողությունները, երբ օրակարգի հարց է դառնում լինել-չլինելու խնդիրը: Նման պարագայում շարունակել առաջնորդվել «հին, բարի ավանդույթներով» նշանակում է վտանգի ենթարկել երկիրն ու նրա ժողովրդին: Դարերի խորքից եկող ոչ միայն բարոյական, այլև իրավական խնդիր էր, թե ու՞մ մեղքն էր ի վերջո ավելի՞ անընդունակ դեկավար-առաջնորդների՞, որ կործանարար գաղափարներ են ձևավորում և հրամաններ արձակում, թե՞ նրանց, ովքեր կաշվից դուրս են գալիս հիմնավորելու և արդարացնելու այդ գաղափարներն ու հրամանները՝ իշխող համակարգում իրենց տաքուկ տեղն ապահովելու համար: և արդյոք դեկավար-առաջնորդի անընդունակությունը կվերածվե՞ր վտանգավոր բախտախնդրության, եթե նրա միջավայրում չգերակայեր անսկզբունքային ենթարկվածության մթնոլորտը, այլ իբրև աշխատանքային բարձրագույն արժեք գնահատվեր առողջ այլակարծությունը:

Կա՞րդյոք «այո-մարդկանց» երևույթը Հայաստանում:

Այն պարզապես երբեք էլ չի դադարել լինելուց: Եվ եթե ջոնսոնյան Ամերիկայում այն վարակել էր սոսկ իրեն՝ նախագահին ու նրա անմիջական շրջապատին, իսկ հասարակության ամենալայն խավերը և անգամ վարչակարգին մոտ կանգնած բազմաթիվ ականավոր գործիչներ համարձակություն ունեին ակտիվորեն բողոքարկելու կործանարար քաղաքականությունը կամ ի նշան անհամաձայնության հրաժարական տալու, ապա մեզ մոտ դա շատ ավելի ընդգրկուն երևույթ է, որ զարգացում է ապրում ինչպես վերնից ներքև այնպես էլ հակառակ ուղղությամբ: Տասնամյակներով արմատավորված այն բարոյականությունը, թե կարևորը ոչ թե մասնագիտական ունակություններն են, այլ համապատասխան օղակում տեղավորվելու «շնորհքը»՝ երկկողմանի անարգել երթևեկություն են բացել նրանց համար, ով «այո-մարդկանց» կարիքն ունի, և նրանց, ով պատրաստ է այդպիսին լինել: Այստեղից էլ ծնվում է հասարակության մի զգալի հատվածի անխախտ և էությամբ այլանդակ համերաշխությունը, որ բնականաբար ընդհանուր ոչինչ չունի «հասարակական համաձայնություն» հասկացության հետ: Ընդ որում, այն ծաղկում-փթթում է ինչպես իշխանության համակարգում, այնպես էլ ընդդիմության շրջանակներում: «Այո-մարդկանց» կույր ծառայությունն ընկած է մեր հասարակական հարաբերությունների հիմքում, սակայն քանզի վարչակարգն է պատասխանատու երկրի ու ժողովրդի ապագայի համար, նրա համակարգի վիճակն է առաջնահերթ խնդիր դառնում:

Յուրաքանչյուր հասարակության մեջ առկա է մի մեծաքանակ խավ, որ միշտ պատրաստ է հարմարվելու «նոր իրողություններին», բարոյական կամ այլ բնույթի արգելքներ չունի քանոն համընթաց շարժվելու համար: Շնորհիվ իրենց ծառայողականության, նրանք բոլոր հասարակարգերի և վարչակարգերի հնազանդ ծառաներն են: Անցյալում ձեռք բերված ղեկավար պաշտոնը, գիտական կոչումը և այլն, ապահովում են նրանց տաքուկ տեղը նաև նոր, թեկուզ և արմատապես տարբեր իրավիճակում: Ավելորդ է ասել, որ նման ճանապարհով առաջընթաց ապրած այդ խավը թշնամի է պրոֆեսիոնալիզմին և արդյունավետ աշխատանքին, քանզի երկուսն էլ սպառնում են նրան գահընկեց անել դատարկության վրա կառուցված բարձունքից: Իսկ նվաճված դիրքերը պահպանելու ամենաազդեցիկ զինամիջոցը «այո-մարդ» լինելն է, որի գայթակղությանը բարձրագույն իշխանությունները դժվարությամբ են դիմագրավում, իսկ մեր պայմաններում պարզապես խրախուսում են: Առավել ողբերգականն այն է, որ այս երևույթը կայուն ժառանգական բնույթ է կրում, և երիտասարդությունը, «ճիշտ» կողմնորոշվելով, ընտրում է նույն ճանապարհը: «Յեսմենության» հետևանքները Հայաստանում ակնհայտ են: Ամենատարբեր գերատեսչությունների պաշտոնյաները մասնավոր խոսակցություններում ահագանգ են խփում տիրող իրավիճակի, հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության, նրա գործողությունների, կադրային անհեթեթության և այլնի մասին, սակայն, ինչպես և խորհրդային ժամանակներում, այդ ամենը միայն խոհանոցում և խիստ նեղ շրջանակներում: Իսկ իբրև վարչակարգի ծառա՝ նրանք պատրաստ են հոխորտալով պաշտպանել նրա յուրաքանչյուր քայլը: Ոչ ոք հրաժարական չի տալիս, հրապարակային ելույթ չի ունենում՝ հավանաբար մասնավոր խոսակցություններում արտահայտած դժգոհությունը և անհամաձայնությունը համարելով քաղաքացիական պարտքի լիարժեք կատարում: «Յեսմենությունը» ապրում է և հաղթանակում՝ նորաստեղծ պետականության պատմության առաջին իսկ էջերում թողնելով արյունալի հետքեր: և կրկին նույն հարցը. իսկ ո՞վ է առավել մեղավոր: Ասենք՝ արտգործնախարարությունում թերթերից վերլուծություններ «թխող» լեզվաբան-քաղաքագետները, կամ Բազարգան ու Բախտիար անունները ֆիրմաների անվանումներ համարող երիտասարդ դիվանագետները, որոնք որոշում են մեր պետության ու ժողովրդի քաղաքական ապագան, թե՞ նույն գերատեսչությունում աշխատող երիտասարդ և տարեց իրական մասնագետները, որոնք հանդուրժում են նման իրականությունը: Իսկ չէ որ արտգործնախարարության և արտաքին հարաբերություններին ուղղություն տվող այլ գերատեսչությունների՝ ազգային անվտանգության խորհրդի, նախագահի ապարատի տեղեկատվական-վերլուծական կենտրոնի, խորհրդական-օգնականների, Հայաստանը արտերկրում և միջազգային կազմակերպություններում ներկայացնող մարդկանց աշխատանքից է անմիջականորեն կախված իրավիճակը ԼՂ-ում, պատերազմի ընթացքը, զոհերի քանակը, հանրապետության տնտեսական վիճակը, ներքին սփյուռքի կյանքի անվտանգությունը, մի խոսքով, միլիոնավոր հայերի ճակատագիրը: և էթե նրանք

անձնական պատասխանատվություն չեն զգում ԼՂՀ-ում ու Աբխազիայում, սահմանամերձ գոտում ու Ռուսաստանում զոհված կամ գաղթական դարձած յուրաքանչյուր հայի համար, և ժողովուրդն էլ հաշիվ չի պահանջում նրանցից, ապա «յեամենության» բարգավաճումն ավելի քան բնական է:

Օրեցօր ուժգնանում են անկախ դիտորդների և ընդդիմության կոչերը՝ միջոցառումներ ձեռնարկել հանրապետության բնակչության ոգին բարձրացնելու և կարգուկանոն հաստատելու ուղղությամբ: Այս կոչերը որքան արդարացի են, նույնքան պարզամիտ: Ինչպե՞ս կարող է մի վարչակարգ, որ կառուցված է «այո-մարդկանց» ծառայության վրա, ոգի բարձրացնել կամ կարգուկանոն հաստատել: Չէ որ եթերից ու մամուլի էջերից հնչող համախմբվածության, ազգին ու պետությանը ծառայելու, հաղթանակ ու առաջընթաց ձեռք բերելու գեղեցիկ գաղափարներին կյանքն անմիջականորեն հակադրում է «այո-մարդկանց» անձեռնհասությունը, կարիերիզմը, լիարժեք աշխատելու և կառուցելու անընդունակությունը: Միամտություն է կարծել, թե ժողովուրդը դա չի տեսնում և չի զգում: Անհնար է, որ նույն հասարակության մի ստվար հատվածը, իր ճանապարհին ոտնատակ տալով ամեն ինչ, մազլցի վարչակարգի աստիճանակարգով, իսկ մյուս հատվածը մի կողմ թողնի իր անձնապաշտությունը և նվիրվի ընդհանուր գործին: Նման ինքնագոհության ընդունակ են միայն խիստ սահմանափակ քանակի մարդիկ: Ուստի, ժողովրդի ոգին հեռուստահաղորդումներով ու խրոխտ կոչերով չէ, որ պետք է բարձրացնել, այլ համակարգի արմատական փոփոխություններով: Ժողովուրդը պետք է յուրաքանչյուր քայլին զգա, որ իրենից անձնագոհություն պահանջող իշխանությունն ինքն էլ այդպիսին է և ձեռնհաս է որևէ լուծում գտնելու ծառացած խնդիրներին: Իսկ «այո-մարդկանց» հաստատած կարգուկանոնի արդյունքներին սպասողները թող մի պահ մտածեն, թե ինչ կլինեն Միացյալ Նահանգների հետ, եթե նրա ժողովուրդն ու քաղաքական ուժերը չսանձեին «այո-մարդկանց» կործանարար երևույթը, չգիտակցեին իրենց նախագահին ուղղություն տվող «ստվերների» բուն էությունը, այլ հնարավորություն տային Ջոնսոնի և Ռոսթոմի նման առաջնորդներին սեփական ազգակործան քաղաքականությունը երկարաձգելու համար կարգ ու կանոն հաստատել իրենց երկրում:

17.09.92